



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

### ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄՆ ԱՐՁԱՆԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ, նաև՝ Պալատ**) կանոնադրության 16.4-րդ կետի պահանջն առ այն, որ *Փաստաբանների պալատի խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում այդ անդամի փոխարեն ներգրավվում է Փաստաբանների պալատի խորհրդի անդամների վերջին ընտրության տվյալներով վարկանիշային հաջորդ առավել «կողմ» ձայներ ստացած, սակայն չընտրված փաստաբանը՝ նախորդ անդամի սահմանված ժամկետի մնացած ժամանակահատվածի համար՝ ...*,

հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պալատի խորհրդի անդամ Սիմոն Ալբերտի Բաբայանը 12.08.2021թ. Պալատի խորհրդի նախագահին ներկայացված դիմումով խնդրել է Պալատի խորհրդի անդամի իր լիազորությունները համարել վաղաժամկետ դադարած, որի հիմքով (Պալատի կանոնադրության 16.34-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն) Սիմոն Ալբերտի Բաբայանի խորհրդի անդամի լիազորությունները 13.08.2021թ. համարվել են վաղաժամկետ դադարած,

նկատի ունենալով այն հանգամանքը, որ Պալատի խորհրդի անդամ ներգրավվելու վերաբերյալ 16.08.2021թ. գրավոր առաջարկ է ներկայացվել Պալատի խորհրդի 2021 թվականի ընտրությանը վարկանիշային հաջորդ առավել՝ 285 (երկու հարյուր ութսունհինգ) «կողմ» ձայներ ստացած փաստաբան **Գայանե Ասատուրի Դեմիրջյանին (արտոնագիր №1881)**, որը 17.08.2021թ. տվել է որպես Պալատի խորհրդի անդամ ներգրավվելու գրավոր համաձայնություն,

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

**1. Արձանագրել, որ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ Սիմոն Ալբերտի Բաբայանի լիազորությունները համարվում են վաղաժամկետ դադարած 2021 թվականի օգոստոսի 13-ից:**

**2. Արձանագրել, որ ՀՀ փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովի 07.03.2021թ. թիվ 2-ի արձանագրության 5-րդ կետի համաձայն վարկանիշային**

**18 օգոստոսի 2021թ.**

**թիվ 165-Ա**

*հաջորդ առավել «կողմ» ձայներ ստացած և որպես ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ ներգրավվելու համաձայնություն ներկայացրած փաստաբան Գայանե Ասատուրի Դեմիրջյանը (285 ձայն, 9-րդ տող) 2021 թվականի օգոստոսի 18-ից (գրավոր համաձայնությունը ներկայացնելու հաջորդ օրվանից) համարվում է ներգրավված ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կազմում Սիմոն Ալբերտի Բաբայանի փոխարեն՝ վերջինիս լիազորությունների համար սահմանված ժամկետի մնացած ժամանակահատվածով:*

Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

18 օգոստոսի 2021թ.  
թիվ 165-Ա  
ք. Երևան